ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N 219-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N 219-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 5-ի «Ծխախոտի անվտանգության տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի **N 540-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 219-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝**

1) որոշման վերնագրում, 1-ին կետում և որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի (այսուհետ՝ հավելված) ամբողջ տեքստում (բացառությամբ՝ հավելվածի 5-րդ կետի 1-ին նախադասության, 5-րդ կետի 11-րդ ենթակետի, 10.2-րդ կետի, 17-րդ կետի 8-րդ և 9-րդ ենթակետերի) «ծխախոտ», «ծխախոտային արտադրատեսակներ» և «ծխախոտային արտադրանք» բառերն իրենց հոլովաձևերով փոխարինել «տաքացվող ծխախոտային արտադրատեսակ» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով.

2) որոշման 5-րդ կետը հանել.

3) հավելվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Տաքացվող ծխախոտային արտադրատեսակի անվտանգության տեխնիկական կանոնակարգի (այսուհետ տեխնիկական կանոնակարգ) գործողությունը տարածվում է արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2404 11 000, 2404 12 000 0, 2404 19 000 ծածկագրերի ներքո դասվող տաքացվող ծխախոտային արտադրատեսակների վրա։».

4) հավելվածի 5-րդ կետի 11-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «11) տաքացվող ծխախոտային արտադրատեսակ՝ ծխախոտային արտադրատեսակ, որը նախատեսված է միայն տաքացման սարքով օգտագործման համար՝ առանց այրման կամ կիսաայրման.».

5) հավելվածի 5-րդ կետի 12-րդ ենթակետում հանել «,ինչպես նաև օգտագործվում է սիգարների և սիգարիլլաների (սիգարիտաների) հատով իրացման ժամանակ» բառերը.

6) հավելվածի 5-րդ կետի 13-րդ ենթակետում հանել «ինչպես նաև առանձին ծխախոտային արտադրատեսակների դեպքում երկրորդային ծխի» բառերը.

7) հավելվածի 5-րդ կետի 14-րդ ենթակետում հանել «և օգտագործման եղանակով», «ծխելու կամ չծխելու» բառերը.

8) հավելվածի 7-րդ և 8-րդ կետերում հանել «(կամ)» բառը.

9) հավելվածի N **2 աղյուսակն ուժը կորցրած ճանաչել.**

10) հավելվածի 10-րդ կետում «N **2 աղյուսակում, 10.1-ին, 11-րդ ու 12-րդ կետերում» բառերը փոխարինել «10.2-րդ և 10.3-րդ կետերում» բառերով.**

11) հավելվածի 10.1-ին կետը հանել.

12) հավելվածի 10.3-րդ կետում հանել «ծխախոտային», ինչպես նաև «, նիկոտին պարունակող ոչ ծխախոտային խյուսում» բառերը.

13) հավելվածի 17-րդ կետում «,իսկ դրանց թափանցիկ լինելու դեպքում՝ ներդիր թերթիկի» բառերը փոխարինել «(ներդիր թերթիկի)» բառերով.

14) հավելվածի 17-րդ կետի 5-րդ և 7-րդ ենթակետերը հանել.

15) հավելվածի 17-րդ կետի 8-րդ ենթակետում հանել «դեպքում՝ դրանց» բառերը.

16) հավելվածի 17-րդ կետի 9-րդ ենթակետում և N 3 ձևում հանել «ծանր» բառը.

17) հավելվածի 17-րդ կետի 10-րդ ենթակետում հանել «տաքացվող ծխախոտային արտադրանքի դեպքում» բառերը.

18) հավելվածի 17-րդ կետի 11-րդ ենթակետում հանել «տեղեկություններ **առավելագույն մանրածախ գինը Հայաստանի**

Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 817-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան, ինչպես նաև» բառերը.

19) հավելվածի 17.2-րդ կետում հանել «, ինչպես նաև սիգարների և սիգարիլլաների (սիգարիտաների) հատով իրացման ժամանակ» բառերը.

20) հավելվածի 17.3 կետի 1-ին ենթակետում հանել ««խեժի ցածր պարունակությամբ»,» բառերը.

21) հավելվածի 17.4-րդ կետում հանել «ծխի մեջ խեժի,» բառերը.

22) հավելվածի N 4 աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աղյուսակ N 4

1.	ՀՍՏ ԻՍՕ 4387	Ընդհանուր և նիկոտին չպարունակող չոր նյութի որո սովորական ծխեցնող մեքենայով
2.	ԳՕՍՏ ԻՍՕ 3308	Լաբորատոր սովորական մեքենա սիգարետների ծխ համար (ծխեցնող մեքենա). Սահմանումներ և ստանդարտ պայմաններ
3.	ԳՕՍՏ ԻՍՕ 3402	Ծխախոտ և ծխախոտային արտադրատեսակներ. Լավորակման և փորձարկման մթնոլորտներ
4.	ԳՕՍՏ 54458	Տաքացվող ծխախոտ. Ընդհանուր տեխնիկական պա
5.	ՍՏ ՌԿ 3304	Նիկոտին պարունակող ապրանքներ. Տաքացվող ծխ պարունակող ապրանքներ. Տեխնիկական բնութագր
6.	ԳՕՍՏ Ռ 70654	Առանց ծխախոտի ջեռուցման խառնուրդ. Ընդհանու տեխնիկական պայմաններ
7.	ԳՕՍՏ 31632	Սիգարետներ. Նմուշառում
8.	ՉԻՄ 01	Բարակ կտրված ծխախոտի և ծխամորճի ծխախոտ չափման իրականացման մեթոդիկա
9.	ՍՏԲ 2601	Նիկոտին պարունակող ոչ ծխախոտային արտադրա օգտագործման համար. Ընդհանուր տեխնիկական ա
10.	ԳՕՍՏ 35068	Տաքացվող ծխախոտ, առանց ծխախոտի խառնուրդ արտադրանք. Հեղուկներ նիկոտինի առաքման էլեկտ համակարգերի համար. Նիկոտին պարունակող բերա օգտագործման արտադրանք Առանց ծխախոտի տա խառնուրդներ. Նիկոտինի որոշում լցանյութում
11.	ՉԻՄ 02	Սիգարների և սիգարիլաների հաստության չափման իրականացման մեթոդիկա
12.	ԳՕՍՏ 6824 Գլիցերին թորած	Ընդհանուր տեխնիկական պայմաններ
13.	ԳՕՍՏ 8072 Ֆերմենտացված ծխախոտի հումք	Տեխնիկական պայմաններ
14.	ԳՕՍՏ 26996 Պոլիպրոպիլեն և պրոպիլենի համապոլիմերներ	Տեխնիկական պայմաններ
15.	ՀՍՏ 408	Նիկոտին պարունակող արտադրանք. Տաքացվող ծխ արտադրատեսակներ. Տեխնիկական պայմաններ

16. ՀՍՏ 430 Առանց ծխախոտի տերևի նիկոտին պարունակող արտադրատեսակներ բերանացի (օրալ) օգտագործմ
Ընդհանուր տեխնիկական պայմաններ

23) հավելվածի 30-րդ կետի 2-րդ ենթակետում «սիգարետների» և «մեկ սիգարետի ծխում նիկոտինի ու խեժ պարունակությունը և մեկ ֆիլտրով սիգարետի ծխում ածխածնի օքսիդի պարունակության» բառերը փոխարինել «տաքացվող ծխախոտային արտադրատեսակի» բառերով.

24) հավելվածի 33-րդ կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերությունից հանել «սիգարետների համար ֆիլտրի առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև» և «ու խեժի» բառերը, իսկ «մեկ սիգարետի ծխում պարունակությունը մեկ ֆիլտրով սիգարետի ծխում» բառերը փոխարինել «մեկ տաքացվող ծխախոտային արտադրատեսակում» բառերով.

25) հավելվածի 35-րդ կետում «Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը փոխարինել ««, Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքներով և իրավական այլ ակտերով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ